# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ՀԵՌԱԳԻՐ

Երուսաղէմ, 30 Սեպտեմբեր 1983

Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Ձեր Սրբութեան գահակալութեան եւ օծման 28րդ տարեդարձին ուրախ առիթով, հաճեցէք ընդունիլ մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Սաղիմահայ համայնքի ջերմագին շնորհաւորութիւնները, երկար ու երջանիկ օրերու լաւագոյն բարեմաղթութիւններով հանդերձ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԲԵՄԱԿԱՆՔ

● *Եր. 1 Հոկտ.* — Տօն Խաչի: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերին մատուռին մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:*

● *Կիր. 2 Հոկտ.* — Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց եւ ԻԸ. Տարեդարձ Օծման Տ. Տ. Վազգէն Ա. Վեհ. Կաթողիկոսին Ամենայն Հայոց: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:*

● *Ուր. 7 Հոկտ. — Նախատօնակը պաշտըւեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Յովսէփ Ծ. Վրդ.:*

● *Եր. 8 Հոկտ.* — Ս. Գէորգայ զօրավարին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Արղ. Ալճանեան: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց եւ սատանան յաղթանակելու կերպին շուրջ քարոզեց Հոգշ. Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Մանուկ: Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Հօրը Տեսչէն:*

*— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ մեր վերնամատրան մէջ, նախագահութեամբ Գերշ. Լուսարարապետ Ս. Հօր: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Գուսան Արեղայ Ալճանեան:*

● *Կիր. 9 Հոկտ.* — Տօն Վարագայ Ս. Խաչին: *Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Կարեկին Արքեպս. մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որմէ ետք նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.ի օծման 28րդ տարեդարձին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանքի» արարողութեան:*

● *Եր. 15 Հոկտ.* — Ս. 72 աշակերտացն Քրիստոսի: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ներքին դաւիթը՝ Ս. Գէորգայ սեղանին վրայ: ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:*

● *Կիր. 16 Հոկտ. — Այսօր կատարուեցաւ Ռեմլէի Ս. Գէորգայ վանքի տարեկան տօնախմբութիւնը: Երուսաղէմէն, Եաֆայէն եւ Հայֆայէն բաւական թիւով հայեր եկած էին ուխտագնացութեան: ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Արղ. Ալճանեան:*

● *Ուր. 21 Հոկտ. — Թարգմանչաց նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Տեսուչը Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանին:*

● *Եր. 22 Հոկտ.* — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: ժամարարն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան, որ քարոզով մը պանծացուց գործը եռամեծ մեր Թարգմանիչներուն: Ընկալեալ սովորութեան համաձայն, Կիւլպէնկեան բարերար գերդաստանի հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին նախագահեց Գերշ. Լուսարարապետ Սրբազանը:*

● *Կիր. 23 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեան:*

● *Եր. 29 Հոկտ.* — Ս. Զօրաց Աւետարանչացն: *Դարձեալ կարելի չեղաւ Ս. Պատարագ մատուցանել Ս. Յարութեան գաւիթին վրայ բացուող Ս. Յովհ. Աւետարանչի մատրան մէջ, ուր աւելի քան տարիէ մը ի վեր հիմնական նորոգութիւններ կը կատարուին: — Ի Ս. Գլխադիր պատարագեց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.:*

● *Կիր. 30 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբեղայ Ալճանեան:*

● *Բշ. 31 Հոկտ.* — Ս. Յովսէփայ Աստուածահօրն: *Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: ժամարարն էր, ընկալեալ սովորութեան համաձայն, Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:*

digitised by A.R.A.R.@

● Շբ. 5 Նոյմ. — Ս. Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեան։

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառաւ» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճարը։ Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնայս կից՝ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և Նախատօնակ՝ Նախագահութեամբ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ի։ Այս կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ.։

● Կիր. 6 Նոյմ. — Գիւտ Խաչ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան։ Այս կատարուեցաւ եռագործ մեծահանդէս թափօր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին և մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, սկսելով Խաչգիւտի այրէն և վերջանալով Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Թափօրը կը գլխաւորէր Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը, ամպհովանիի ներքև և կենաց Փայտի մասունքն ի ձեռին։

● Շբ. 12 Նոյմ. — Ս. Յովհաննու Ոսկեբերանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան։

● Կիր. 13 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Կարապետի խորանին վրայ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Վրդ. Որդիքեան։

● Ուր. 18 Նոյմ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Շբ. 19 Նոյմ. — Տօն Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան։ Ընկալեալ սովորութեան համաձայն, բարերարուհի Աղաւնի Ճէվահիրճեանի և պարագայից համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.։

● Կիր. 20 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատրան մէջ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Արղ. Ալճանեան։

● Շբ. 26 Նոյմ. — Առաք. Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր։ ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.։

● Կիր. 27 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ.։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Դշ. 13 Սեպտ. — Առաւօտուն, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառ. Վարժարանի և Ընծայարանի 83-84 դպրոցական տարեշրջանին։

● Դշ. 5 Հոկտ. — Իտալական Ընդհ. Հիւպատոս Mr. Giuseppe Ruggiero, պաշտօնով քաղաքէս տեղափոխուելուն առիթով, հրաժեշտի այցելութեան եկաւ Պատրիարքարան։

● Դշ. 12 Հոկտ. — Երեկոյեան, Սպանիոյ ազգային տօնին առթիւ, Սպանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. և Քարտուղար Տիար Գէորգ Հինդլեան։

● Շբ. 22 Հոկտ. — Երեկոյեան, Նօթր Տամի հիւրանոցին մէջ, Ն. Ս. Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին գահակալութեան 5րդ տարեդարձի և Պապական Նուիրակ Mons. William Carewի մօտօրէն պաշտօնով քաղաքէս փոխադրուելուն առիթներով տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Լուսարարապետ Սրբազանը, Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. և Տիար Գ. Հինդլեան։

● Բշ. 24 Հոկտ. — Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմի բազմամեայ Առաջնորդ և Ս. Ուխտիս Միաբան Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան ժամանեց Ս. Աթոռ և մեկնեցաւ շաբաթ մը ետք։

● Ուր. 28 Հոկտ. — Պապական Նուիրակը հրաժեշտի այցի եկաւ Պատրիարքարան։

● Դշ. 1 Նոյմ. — Ս. Ուխտիս Միաբան և Պրազիլի Առաջնորդական Տեղապահ Հոգշ. Տ. Տաթև Ծ. Վրդ. Ղարիպեան ժամանեց Ս. Աթոռ և վերադարձաւ Կիրակի երեկոյեան։

● Դշ. 15 Նոյմ. — Լուտերականներու Եպս. Տաուտ Հատտատի և Փրոֆ. Եարկէն Ռեհմանի կողմէ, Martin Lutherի ծննդեան 500ամեակին առթիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիկեան, Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. Գալէմքերեան և Տիար Գ. Հինդլեան։

● Դշ. 16 Նոյմ. — Երեկոյեան, նոյն առիթով, Լուտերական Եկեղեցւոյ մէջ կայացած արարողութեան ներկայ եղան Գերշ. Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպս., Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան և Տիար Հինդլեան։ Սրբազանը Անգլերէնով կարճ ուղերձ մը ըրաւ, Հայ և Լուտերական Եկեղեցիներու սերտ յարաբերութիւնները յիշելով։ Յետոյ եկեղեցւոյ կից սրահին մէջ կատարուեցաւ պատշաճ և մտերմիկ հիւրասիրութիւն։

● Դշ. 30 Նոյմ. — Երեկոյեան, St. Andrew's Dayի առթիւ, «Սքոչ Հօսփիսի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Սրբազանը և Տիար Հինդլեան։

digitised by A.R.A.R.@